

Հանդիպում Հայաստանի գրողների միության Վայոց ձորի մասնաճյուղում

29.08.2012



Օրերս Եղեգնաձորի մանկական երաժշտական դպրոցի համերգային դահլիճում կայացավ գրական երաժշտական միջոցառում, որին ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը և Հայաստանի գրողների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Լևոն Անանյանի գլխավորությամբ: Նեկաներին՝ Հայաստանի գրողների միության Վայոց ձորի մասնաճյուղի անդամներին, ողջույնի ջերմ խոսքեր ասացին մարզպետ Էդգար Ղազարյանը և Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը:

Մասնաճյուղի մեկ տարվա գործունեության մասին հաշվետվություն ներկայացրեց մասնաճյուղի ղեկավար Ֆոլիկ Հակոբյանը: Այնուհետև երաժշտական ընդմիջումներով հնչեցին հատվածներ վայոցձորցի ստեղծագործողների չափածո և արձակ ստեղծագործություններից:

Վերջում ներկաներին իր կատարումներով ողջունեց մասնաճյուղի անդամ, ինքնուս ստեղծագործող, երգահան Արմեն Ադամյանը:

Մինչ միջոցառումը հյուրերը հասցրել էին այցելել Եղեգնաձորի երկրագիտական թանգարան: